

| Հարցաշար | |
|---|--|
| Գեոդեզիական և մարկշեյդերական գործունեության որակավորման | |
| Հ/Հ | Հարցեր |
| 1 | Ի՞նչ է գեոդեզիան |
| 2 | Ի՞նչ է ինժեներական գեոդեզիան |
| 3 | Ի՞նչ է մարկշեյդերական գործունեությունը |
| 4 | Ի՞նչ է քարտեզագրությունը |
| 5 | Ի՞նչ է գեոդեզիական և քարտեզագրական գործունեություն |
| 6 | Ի՞նչ է գեոդեզիական հիմնակետը |
| 7 | Ի՞նչ է գեոդեզիական ցանցը |
| 8 | Ի՞նչ է ռեֆերենց կայանների ցանցը |
| 9 | Ի՞նչ է պետական ռեֆերենց կայանների ցանցը |
| 10 | Ի՞նչ է իրենից ներկայացնում գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքները |
| 11 | Ի՞նչ է երկրի հեռագնումը |
| 12 | Ի՞նչ է կոորդինատային համակարգը |
| 13 | Ի՞նչ է տեղական կոորդինատային համակարգը |
| 14 | Ի՞նչ է մասշտաբը |
| 15 | Ի՞նչ է մասշտաբային շարքը |
| 16 | Ի՞նչ է քարտեզը |
| 17 | Գեոդեզիական և մարկշեյդերական գործունեություն իրականացնող անձը կարող է իրականացնել. |
| 18 | Քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեություն իրականացնող անձը կարող է իրականացնել. |
| 19 | Գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքներն ըստ նշանակության դասակարգվում են. |
| 20 | Պետական նշանակության գեոդեզիական աշխատանքներն են. |
| 21 | Պետական նշանակության քարտեզագրական աշխատանքներն են. |
| 22 | Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության սուբյեկտներն են. |
| 23 | Գեոդեզիական և քարտեզագրական գործունեությամբ ստեղծվում են. |
| 24 | Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում ՀՀ կառավարությունը սահմանում է. |
| 25 | Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը ապահովում է. |
| 26 | Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը հաստատում է. |

| | |
|----|--|
| 27 | Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում պետական կառավարման այլ մարմինները կարող են իրականացնել. |
| 28 | Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինները ապահովում են. |
| 29 | Կադաստրի կոմիտեն սահմանում է. |
| 30 | Ո՞ր մարմինն է իրականացնում գեոդեզիական և քարտեզագրական գործունեության պետական վերահսկողությունը |
| 31 | Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեությամբ կարող են զբաղվել. |
| 32 | Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության հետևանքով պատճառված վնասը հատուցում է. |
| 33 | Ի՞նչ է տարածական տվյալը |
| 34 | Ի՞նչ է ազգային տարածական տվյալը |
| 35 | Ի՞նչ է տարածական տվյալների բանկը |
| 36 | Ի՞նչ է տարածական տվյալների մշակումը |
| 37 | Ի՞նչ է տարածական տվյալների ստանդարտացում |
| 38 | Ի՞նչ է տարածական օբյեկտը |
| 39 | Ի՞նչ է տարածական տվյալների ենթակառուցվածքը |
| 40 | Ի՞նչ է բազային տարածական տվյալը |
| 41 | Ի՞նչ է թեմատիկ տարածական տվյալը |
| 42 | Ի՞նչ է ազգային գեոպորտալը |
| 43 | Ի՞նչ է մետատվյալը |
| 44 | Ի՞նչ է աշխարհագրական տեղեկատվական համակարգը |
| 45 | Տարածական տվյալների հիմնական խմբերն են. |
| 46 | Նշված խմբերից ո՞րը ներառված չէ բազային տարածական տվյալների խմբում |
| 47 | Նշվածներից ո՞րն է հանդիսանում առցանց քարտեզագրական ծառայություն |
| 48 | Գեոդեզիական դաշտային աշխատանքների ժամանակ չափում են. |
| 49 | Ո՞րն է բարձրագույն գեոդեզիայի հիմնական խնդիրներից |
| 50 | Գեոիդի մակերևույթը ամեն մի կետում ուղղահայաց է. |
| 51 | Աշխարհագրական կոորդինատները որոշվում են. |
| 52 | Աշխարհագրական լայնությունը և երկայնությունը արտահայտվում են. |
| 53 | Աշխարհագրական լայնությունը փոփոխվում են. |
| 54 | Կախված որոշման եղանակից ինչպիսի՞ն են լինում աշխարհագրական կոորդինատները |
| 55 | Գաուսի պրոյեկցիայում իքսերի (X) առանցքը համապատասխանում է |
| 56 | Ի՞նչ է վերազանցումը |
| 57 | Նշվածներից ո՞րը մասշտաբի արտահայտման տեսակ չէ |
| 58 | Նշվածներից ո՞ր մասշտաբն է ավելի մեծ |
| 59 | Ի՞նչ տեսակների են լինում պայմանական նշանները |
| 60 | Ի՞նչ է նշանակությունը |

| | |
|----|--|
| 61 | Ազիմուտը չափվում է. |
| 62 | Նշվածներից ո՞րը չի արտահայտում ազիմուտի և ումբի թվային արժեքների կապը |
| 63 | Ո՞րն է դիրեկցիոն անկյունը |
| 64 | Դիրեկցիոն անկյունները փոփոխվում են. |
| 65 | Որքա՞ն է կազմում տրված գծի ումբի մեծությունը, եթե տրված է տվյալ գծի ազիմուտը |
| 66 | Ի՞նչ է ռելիեֆը |
| 67 | Քարտեզների և հատակագծերի վրա ռելիեֆը արտահայտում են. |
| 68 | Լանջի մեծ թեքությունը հիմնավորվում է. |
| 69 | Ամենամեծ թեքություն ունի երկու հարևան հորիզոնականները միացնող. |
| 70 | Ինչպե՞ս են անվանում հորիզոնականների կառուցման համար ռելիեֆի բնորոշ կետերը միացնող գծերը |
| 71 | Ինչպիսի՞ չափումներ են անցկացվում գեոդեզիական աշխատանքներում |
| 72 | Ո՞րն է կոչվում անուղղակի չափում |
| 73 | Ո՞ր չափումներն են համարվում հավասարաճիշտ |
| 74 | Որո՞նք են համարվում անհրաժեշտ չափումներ |
| 75 | Որո՞նք են համարվում լրացուցիչ չափումներ |
| 76 | Չափման սխալներն ըստ իրենց հատկանիշների ի՞նչ տեսակի են բաժանվում |
| 77 | Ո՞րն է համարվում միջին սխալ |
| 78 | Ինչպես է որոշվում միջին քառակուսային սխալը, եթե Δ -միջին սխալն է, իսկ n -ը չափումների քանակը |
| 79 | Ի՞նչ է հարաբերական սխալը |
| 80 | Նշվածներից ո՞րը գեոդեզիական ցանցի տեսակ չէ |
| 81 | Գեոդեզիական հենման ցանցերը ստեղծվում են ելնելով նշված սկզբունքից. |
| 82 | Նշվածներից ո՞րը գեոդեզիական ցանցերի ստեղծման եղանակներից չէ |
| 83 | Նշված գեոդեզիական ցանցերից ո՞րն է ապահովվում ավելի մեծ ճշտություն |
| 84 | Եթե հանույթի ընթացքում որոշում են միայն օբյեկտների եզրագծերի բնորոշ կետերի դասավորությունը, ապա հանույթը անվանում են. |
| 85 | Նշվածներից ո՞րը հանութագրման եղանակ չէ |
| 86 | Ի՞նչ է ուրվանկարը (աբրիսը) |
| 87 | Ի՞նչ է նշանակում տախետոմետրիա բառը հունարենից թարգմանված |
| 88 | Ուղիղ գեոդեզիական խնդրի ժամանակ որոշում են. |
| 89 | Պայմանական նշանները լինում են. |
| 90 | Աբսցիսները և օրդինատները որոշվում են |
| 91 | Ուղղանկյուն կոորդինատային համակարգի ո՞ր քառորդում է գտնվում կետը, եթե տրված են կետի կոորդինատների նշանները (x «-», y «+») |
| 92 | Ինչպե՞ս է որոշվում ցանկացած կառույցի տեղը և դիրքը տեղանքում |
| 93 | Ինչպիսի՞ հետազոտություններ են կատարվում այս կամ այն կառույցի նախագիծը հազմելու համար |
| 94 | Գեոդեզիական հետազոտությունների ընթացքում ինչպիսի՞ աշխատանքներ են կատարվում |

| | |
|-----|--|
| 95 | Որո՞նք են հրապարակային կառույցները |
| 96 | Որո՞նք են գծային կառույցները |
| 97 | Ինժեներագեոդեզիական հետազննությունները կատարելու համար առավելապես ի՞նչ է կարևոր ընտրել |
| 98 | Շինարարության օբյեկտի աշխատանքային գծագիր կազմելու համար ինչպիսի՞ տեղագրական հանույթ են իրականացնում |
| 99 | Ե՞րբ են կիրառում 1:500 մասշտաբի հանութագրումը |
| 100 | Շինարարական աշխատանքներում գեոդեզիական գործունեության ժամանակ հիմնականում ինչպիսի՞ գծագիր է օգտագործում |
| 101 | Որո՞նք են համարվում կառույցների գլխավոր առանցքներ |
| 102 | Որո՞նք են համարվում կառույցների հիմնական առանցքներ |
| 103 | Շինարարական աշխատանքներում գեոդեզիական գործունեության ժամանակ ինչպիսի՞ նշահարման աշխատանքներ կան |
| 104 | Գլխավոր և հիմնական առանցքները նշահարելու համար որպես ելակետային ի՞նչ նյութ են ծառայում |
| 105 | Ի՞նչ է նշահարման կարմիր գիծը |
| 106 | Նոր կարմիր գծերի ստեղծման համար որպես հիմք ծառայում են. |
| 107 | Ի՞նչ եղանակով կարելի է ստանալ նշահարման տվյալներ |
| 108 | Ո՞ր դեպքում է նշահարումը իրականացվում վերլուծական եղանակով ստացված տվյալների հիման վրա |
| 109 | Ինչի՞ հիման վրա են վերլուծական եղանակով հաշվարկվում նախագծվող կառույցների կետերի կոորդինատները |
| 110 | Գծային և անկյունային մեծությունների զուգակցմամբ նախագծվող կետերի դիրքը հատակագծի վրա նկարագրելու համար ի՞նչ եղանակներ են կիրառվում |
| 111 | Որո՞նք են կոչվում տեղակայման տարրեր |
| 112 | Ինչպե՞ս է ստուգվում տեղանքում նախագծային հատվածների նշահարման ճշտությունը |
| 113 | Ի՞նչ է գեոդեզիական տեղակայումը |
| 114 | Ո՞րն է գեոդեզիական հիմքը |
| 115 | Ի՞նչ է բարձունքային ձևախախտումային գեոդեզիական հիմքը |
| 116 | Ի՞նչ է պատահական սխալանքը |
| 117 | Ի՞նչ է սահմանային սխալանքը |
| 118 | Ի՞նչ է կատարողական հանույթը |
| 119 | Ի՞նչ է կատարողական գծագիրը |
| 120 | Ի՞նչ է խորքային հենանիշը |
| 121 | Ի՞նչ է նստվածքային ձևախախտումային դրոշմանիշը |
| 122 | Ի՞նչ է շինության նստվածքը |
| 123 | Ի՞նչ է բացարձակ նստվածքը |
| 124 | Ո՞րն է հենանիշերի փունջը |
| 125 | Ի՞նչ է ճկվածքը |
| 126 | Ի՞նչ ծավալով և ճշտությամբ պետք է իրականացնել շինարարությունում գեոդեզիական աշխատանքները |

| | |
|-----|---|
| 127 | Շենքերի կոնստրուկցիաների և դրանց մասերի, շեղման և ձևախախտումների (դեֆորմացիաների) գեոդեզիական չափումները ու՛մ կողմից է հսկվում |
| 128 | Գեոդեզիական աշխատանքների կազմակերպման համար ի՛նչ է անհրաժեշտ կազմել ու հաստատել |
| 129 | Նշահարման հիմքի տեղադիրքը նախագծելիս ի՛նչ պետք է հաշվի առնել |
| 130 | Կառուցապատված տարածքում բարձրահարկ շենքերի և համալիրների տեղաբաշխման դեպքում գեոդեզիական աշխատանքների կատարման նախագծում ի՛նչ պետք է նշվեն |
| 131 | Ի՛նչ է անհրաժեշտ օգտագործել գեոդեզիական նշահարման հիմքի կետերի ստեղծման համար |
| 132 | Գեոդեզիական կատարողական սխեմաները ինչպե՛ս են կազմվում |
| 133 | Ինչպե՛ս պետք է իրականացվեն շինարարության համար գեոդեզիական նշահարման հիմքի կառուցման աշխատանքները |
| 134 | Ինչպե՛ս պետք է իրականացնել շինարարության համար գեոդեզիական նշահարման հիմքի կետերի ամրացումը |
| 135 | Ինչպե՛ս պետք է որոշել շինարարության համար գեոդեզիական նշահարման հիմքի կետերի պլանային կոորդինատները |
| 136 | ԳԼՈՆԱՍՍ/ՋիՊԻԷս (GLONASS/GPS) գործիք-սարքավորումների համալիրների և էլեկտրոնային չափիչ սարքերի կիրառմամբ նշահարման աշխատանքների կատարման ընթացքում ցանցի բազային կետերը որտե՛ղ պետք է տեղակայել |
| 137 | Տեղական կոորդինատային համակարգերում մշակված նախագծային փաստաթղթերի իրականացման համար գեոդեզիական նշահարման հիմքը ինչպե՛ս պետք է կապակցել |
| 138 | Կառուցապատողի կողմից կապալառուին ինչպիսի՛ տեքստային և գրաֆիկական նյութեր պետք է տրամադրվեն |
| 139 | Ծրագծերի բնության մեջ տեղափոխման ու հետազննման ակտերը ե՛րբ պետք է կազմվեն |
| 140 | Շինարարության գործընթացքում նշահարման աշխատանքները ի՛նչ պետք է ապահովեն |
| 141 | Նախքան հերթական նշահարման աշխատանքների սկիզբը ի՛նչ պետք է նախապատրաստել |
| 142 | Նշահարման աշխատանքների անհրաժեշտ ճշտությունը ինչպե՛ս որոշել |
| 143 | Տեխնոլոգիական սարքավորումների և շինարարական կոնստրուկցիաների մոնտաժման համար նշահարման աշխատանքները ինչպե՛ս պետք է կատարել |
| 144 | Նշահարման աշխատանքների մեկնարկից առաջ գեոդեզիական աշխատանքներ կատարողը ի՛նչ պետք է կատարի |
| 145 | Ի՛նչ է կառուցվող շենքերի (շինությունների) երկրաչափական պարամետրերի ճշտության գեոդեզիական հսկողությունը |
| 146 | Ինչպե՛ս պետք է կատարվի գեոդեզիական հանույթը |
| 147 | Ի՛նչ է շենքերի (շինությունների) մշտադիտարկումը |
| 148 | Գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգերի (GNSS) կիրառմամբ ինչպե՛ս են որոշվում կետերի կոորդինատները |
| 149 | Քանի՞ ատոմային ժամացույց կա GPS արբանյակում |

| | |
|-----|---|
| 150 | Քանի՞ արբանյակներից պետք է ստանա միաժամանակյա ազդանշաններ, որպեսզի GNSS ընդունիչը կարողանա որոշել իր տեղադիրքը |
| 151 | Ո՞ր սեգմենտներից (բաղկացուցիչ մասեր) է կազմված GPS համակարգը |
| 152 | Քանի՞ միատեսակ կոորդինատային առանցքներ են ստացվում Գաուս-Կրյուգերի ուղղանկյուն կոորդինատային համակարգում |
| 153 | Համաձայան UTM պրոյեկցիայի որքա՞ն աստիճանով է երկրագունդը բաժանված լայնական գոտիների |
| 154 | Նշվածներից ո՞րն է ամենակարևոր գործոնը GPS չափումների ժամանակ |
| 155 | Ո՞ր դեպքերում է թույլատրվում ՀՀ տարածքի աշխարհագրական օբյեկտների անվանափոխումը. |
| 156 | Ու՞մ կամ ո՞ր մարմին են ներկայացվում աշխարհագրական օբյեկտների անվանակոչման կամ անվանափոխման առաջարկությ ունեցրի. |
| 157 | Օգտակար հանաձոյի արդյունահանման իրավունք ստացած անձը պարտավոր է. |
| 158 | Ընդերքը կարող է օգտագործվել. |
| 159 | Ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողությունն իրականացվում է հետևյալ ուղղությունով. |
| 160 | Ի՞նչ է ընդերքը |
| 161 | Ի՞նչ է երկրաբանական ուսումնասիրությունները |
| 162 | Ի՞նչ է ընդերքօգտագործումը |
| 163 | Ո՞վ է ընդերքօգտագործողը |
| 164 | Օգտակար հանաձոյների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունը իրավունք է տալիս. |
| 165 | Օգտակար հանաձոյի արդյունահանման թույլտվությունը իրավունք է տալիս. |
| 166 | Ի՞նչ է ընդերքօգտագործման իրավունքը |
| 167 | Ո՞րն է համարվում ընդերքի տեղամաս |
| 168 | Ի՞նչ է նշանակում օգտակար հանաձո |
| 169 | Ո՞րն է օգտակար հանաձոյի պաշարները |
| 170 | Ի՞նչ է հանքավայրը |
| 171 | Ի՞նչ է արտադրական լցակույտը |
| 172 | Ո՞րն է օգտակար հանաձոյի երևակումը |
| 173 | Ի՞նչ է նշանակում օգտակար հանաձոյների պաշարների հաշվեկշիռ |
| 174 | Ի՞նչ է հանքավայրերի և օգտակար հանաձոյների երևակումների կադաստրը |
| 175 | Ի՞նչ է նշանակում օգտակար հանաձոյի արդյունահանում |
| 176 | Ի՞նչ է լեռնահատկացումը |
| 177 | Ի՞նչ է օգտակար հանաձոյի արդյունահանման համալիրը |
| 178 | Ի՞նչ է ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը |
| 179 | Ի՞նչ է պոչամբարը |
| 180 | Ի՞նչ է պոչանքները |
| 181 | Ի՞նչ է հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասը |
| 182 | Ի՞նչ է օգտակար հանաձոյի կանխատեսումային ռեսուրսները |

| | |
|-----|--|
| 183 | Նշվածներից ո՞րը ընդերքի օգտագործման և պահպանության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման հիմնադրույթ չէ |
| 184 | Նշվածներից ո՞րը ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում իրականացվող փորձաքննություն չէ |
| 185 | Ի՞նչ են հասկացվում «Լեռնային գրաֆիկական մարկշեյդերական փաստաթղթեր» տերմինն ասելով |
| 186 | Ի՞նչ մասշտաբով են կազմվում ըստ հորիզոնների լեռնային փորվածքների հատակագծերը փոքր բաց հանքի համար |
| 187 | Ի՞նչ մասշտաբով են կազմվում ըստ հորիզոնների լեռնային փորվածքների հատակագծերը միջին բաց հանքի համար |
| 188 | Ի՞նչ մասշտաբով են կազմվում ըստ հորիզոնների լեռնային փորվածքների հատակագծերը մեծ բաց հանքի համար |
| 189 | Ինչպե՞ս են կառուցում բաց հանքի լեռնային փորվածքների ուղղաձիգ կտրվածքը |
| 190 | Ուղղաձիգ հարթության վրա լեռնային փորվածքների պրոյեկցիաները ո՞ր շերտերի և երակների համար են կազմում |
| 191 | Որո՞նք են հանքավայրերի երկրաչափացման հիմնական եղանակները |
| 192 | Ի՞նչ ենք հասկանում օգտակար հանածոյի կուտակ ասելով |
| 193 | Ո՞րն է կոչվում հանքամարմնի մակերևույթի տարածման գիծ |
| 194 | Եթե հանքամարմնի մակերևույթի տարածման գիծը կոր է ի՞նչ է դա նշանակում |
| 195 | Ո՞րն է կոչվում հանքամարմնի անկման գիծ |
| 196 | Ո՞րն է կոչվում հանքամարմնի անկման անկյուն |
| 197 | Ո՞րն է կոչվում հանքամարմնի տեղադրման խորությունը նրա վերնակողի մակերևույթի կետում |
| 198 | Ո՞րն է կոչվում հանքամարմնի հզորություն |
| 199 | Ինչպե՞ս են անց կացվում հետախուզական հորատանցքերը |
| 200 | Ո՞րն է կոչվում հանքամարմնի իրական(սորմալ) հզորություն |
| 201 | Ո՞րն է կոչվում հանքամարմնի հորիզոնական հզորություն |
| 202 | Ո՞րն է կոչվում հանքամարմնի ուղղաձիգ հզորություն |
| 203 | Ինչպե՞ս է ընդունված անվանել հանքամարմնի մակերևույթի հորիզոնականները |
| 204 | Ինչպե՞ս է ընդունված անվանել հանքամարմնի իզոհիպսերով պատկերված հատակագիծը |
| 205 | Ո՞րն է կոչվում իզոհզորությունների գրաֆիկներ |
| 206 | Ո՞րն է կոչվում ուղղաձիգ իզոհզորությունների հատակագիծ |
| 207 | Ո՞րն է կոչվում իզոխորության գիծ |
| 208 | Ո՞րն է ներկայացնում զրոյական իզոխորության գիծը |
| 209 | Հատակագծում ո՞ր գծի դիրքն է թույլ տալիս որոշել հետախուզական շուրֆերի և առունների անցկացման տեղերը |
| 210 | Տեկտոնական խախտումներն ըստ բնույթի ի՞նչ տեսակների են բաժանվում |
| 211 | Ո՞րն է կոչվում ծալքի երկարություն |
| 212 | Ո՞րն է կոչվում ծալքի լայնություն |
| 213 | Ո՞րն է կոչվում ծալքի բարձրություն |
| 214 | Որո՞նք են ծալքի տեղադրման տարրերը |
| 215 | Ո՞րն է կոչվում ապարների տեղաշարժիչ |

| | |
|-----|---|
| 216 | Խզված ապարների ո՞ր մասն է կոչվում պարկած թև |
| 217 | Խզված ապարների ո՞ր մասն է կոչվում կախված թև |
| 218 | Ո՞րն է կոչվում հանքաշերտի խաչման գծեր կամ խզման կողագծեր |
| 219 | Ո՞րն է լեռնային զանգվածի ճեղքվածությունը |
| 220 | Ըստ առաջացման պատճառների՝ ճեղքերը ի՞նչ հիմնական խմբերի են բաժանվում |
| 221 | Ըստ դրսևորման բնույթի ճեղքերն ի՞նչ տեսակների են լինում |
| 222 | Ո՞րն է կոչվում հանքավայրերի որակական հատկությունների երկրաչափացում |
| 223 | Ո՞րն է կոչվում արդյունաբերական պաշար |
| 224 | Ի՞նչ ենք հասկանում հանքամարմնի եզրագծում ասելով |
| 225 | Ո՞րն է հանքավայրի ներքին եզրագիծը |
| 226 | Ո՞րն է հանքավայրի արտաքին եզրագիծը |
| 227 | Ո՞րն է կոչվում միջեզրագծային գոտի |
| 228 | Ո՞րն է կոչվում օգտակար հանածոյի քանակական կորուստներ կամ ուղղակի կորուստներ |
| 229 | Ո՞րն է կոչվում օգտակար հանածոյի որակական կորուստներ կամ աղքատացում |
| 230 | Ո՞րն է կոչվում ստորերկրյա մարկշեղերական հանույթ |
| 231 | Ո՞րն է միացուցիչ հանույթների (հորիզոնական և ուղղաձիգ) նպատակը |
| 232 | Ի՞նչ նպատակով են իրականացվում ստորերկրյա հորիզոնական հանույթները |
| 233 | Ի՞նչ նպատակով է կատարվում եզրագծերի հանույթը |
| 234 | Ի՞նչ նպատակով են իրականացվում ուղղաձիգ հանույթները |
| 235 | Ի՞նչ նպատակով են կատարվում լեռնային փորվածքների չափումները |
| 236 | Ի՞նչ է նշանակում ստորերկրյա լեռնային փորվածքների հորիզոնը կողմնորոշել |
| 237 | Նշե՛լ ստորերկրյա հորիզոնների կողմորոշման 3 հիմնական դեպքերը |
| 238 | Ստորերկրյա բարձրունքային կետերի ցանց ստեղծելիս յուրաքանչյուր հորիզոնում որպես ելակետ ո՞ր հենանիշերն են ծառայում |
| 239 | Բարձրունքային ցանցի հենանիշերի անշարժությունը ստուգելու նպատակով ի՞նչ կարգով են դրանք տեղադրվում |
| 240 | Նշե՛լ հորիզոնական և ուղղաձիգ հարթություններում պայթեցման հորատանցքի առաջադրման թույլատրելի սխալը |
| 241 | Ո՞րն է կոչվում կամրջի հորիզոնական շարժունակություն |
| 242 | Ո՞րն է կոչվում կամրջի ուղղաձիգ շարժունակություն |
| 243 | Ո՞րն է կոչվում կամրջի անկյունային շարժունակություն |
| 244 | Ո՞րն է կոչվում ստորամշակում |
| 245 | Ո՞րն է կոչվում սահքի գոգվածք |
| 246 | Ո՞րն է կոչվում ստորամշակման բազմապատիկություն |
| 247 | Ո՞ր մեծություններն են սպասվող տեղաշարժերը և դեֆորմացիաները |
| 248 | Ո՞ր մեծություններն են հավանական տեղաշարժումները և դեֆորմացիաները |
| 249 | Ի՞նչ է հողամասի մասնավորեցումը |
| 250 | Ի՞նչ է հողերի օգտագործման սխեման |
| 251 | Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը |
| 252 | Ի՞նչ է բնութագրում հողատեսքը |

| | |
|-----|---|
| 253 | Ի՞նչ է համարվում սեփականատիրոջ կողմից այլ անձի օգտագործման իրավունքով անժամկետ տրամադրված հողամասի տիրապետման և օգտագործման իրավունքը |
| 254 | Ի՞նչ է հողաշինարարությունը |
| 255 | Որո՞նք են համարվում գյուղատնտեսական նշանակության հողեր. |
| 256 | Որո՞նք են հողային հարաբերությունների օբյեկտները. |
| 257 | Որո՞նք են հողաշինարարության օբյեկտները. |
| 258 | Որո՞նք են հողերի մոնիթորինգի խնդիրները. |
| 259 | Որտե՞ղ են նշվում հողամասերի նպատակային նշանակության փոփոխման և հետանկարային օգտագործման, դրանց միավորման ու բաժանման վերաբերյալ առաջարկությունները. |
| 260 | Որքա՞ն է սահմանվում համայնքների վարչական սահմաններում ընդգրկվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տրամադրման ժամկետը. |
| 261 | Ու՞մ է կատարվում պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը. |
| 262 | Ու՞մ կամ ո՞ր մարմնի հետ են համաձայնեցվում համայնքների համար մշակվող հողաշինարարական փաստաթղթերի տեխնիկական առաջադրանքները. |
| 263 | Ու՞մ կողմից են հաստատվում հողաշինարարական փաստաթղթերը. |
| 264 | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող որ հողամասերն են արգելվում սեփականության իրավունքով փոխանցել քաղաքացիներին և իրավաբանական անձանց. |
| 265 | Պետության սեփականությանը պատկանող հողերն առանց մրցույթի, անհատույց (մշտական) օգտագործման ու՞մ են տրամադրվում. |
| 266 | Սեփականատերերը և օգտագործողները ի՞նչ միջոցների հաշվին են իրականացնում հողերի պահպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցառումները. |
| 267 | Վարձակալը, առանց վարձատուի համաձայնության ինչի՞ իրավունք չունի. |
| 268 | Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը հողամասի տրամադրման ոլորտում. |
| 269 | Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը վարչական սահմանների և հողամասերի սահմանների հետ կապված հարցերում. |
| 270 | Թույլատրվո՞ւմ է պետության և համայնքների բյուջետային և պետական հիմնարկների գրադեցրած հողամասերի վաճառքը. |
| 271 | Գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացումը հողաշինարարական փաստաթղթերի կազմման ո՞ր փուլերից է. |
| 272 | Ի՞նչ է ներառում հողերի օգտագործման սխեման. |
| 273 | Գյուղատնտեսական նշանակության հողերը քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության կամ օգտագործման իրավունքով ի՞նչ նպատակով են տրամադրվում. |
| 274 | Ե՞րբ են դադարում հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքները. |
| 275 | Ե՞րբ է համայնքի համար մշակվող հողաշինարարական փաստաթղթի առաջադրանքը ներկայացվում է շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների համաձայնեցմանը. |
| 276 | Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը գյուղատնտեսական հողերի պահպանման ոլորտում. |

| | |
|-----|--|
| 277 | Ի՞նչ կարգով է կատարվում տարբեր համայնքների միջև համայնքային հողերի միավորումը, փոխանակությունը և վերաբաշխումը. |
| 278 | Ի՞նչ մասերից է բաղկացած հողերի օգտագործման սխեման. |
| 279 | Ի՞նչ մասշտաբի տեղագրական քարտեզի վրա են ներկայացվում ՀՀ հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայի գրաֆիկական մասերը. |
| 280 | Ի՞նչ միջոցառում է ներառում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման կամ օգտագործման տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը. |
| 281 | Ի՞նչ պետք է ներառեն հողամասի մրցույթի պայմանները. |
| 282 | Ի՞նչ փաստաթղթերի հիման վրա է իրականացվում հողաշինարարությունը. |
| 283 | Ի՞նչ փաստաթղթերին համապատասխան է իրականացվում կառուցապատված հողամասերի փոխանցումը սեփականության իրավունքով. |
| 284 | Ի՞նչն է հիմք հանդիսանում հողաշինարարական փաստաթղթերի մշակման համար. |
| 285 | Ի՞նչն է օգտագործվում որպես սխեմայի մշակման հանության հիմք. |
| 286 | Ինչի՞ց է բխում ՀՀ հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայի կազմման, նախագծման առաջադրանքը. |
| 287 | Ինչո՞վ են սահմանվում հատուկ պահպանվող տարածքների հողերի սահմանման կարգն ու օգտագործման նկատմամբ սահմանափակումները, իրավական ռեժիմը. |
| 288 | Ինչո՞վ է սահմանվում հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության կարգը. |
| 289 | Ինչպե՞ս և ո՞ւմ միջոցով է կատարվում պետության սեփականությանը պատկանող հողամասերի փոխանակությունը. |
| 290 | Ինչպիսի՞ պահանջներ կարող է պարունակել հողամասի թույլատրված օգտագործումը. |
| 291 | Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողերը մշտական օգտագործման տրամադրելու վերաբերյալ հայտին ի՞նչ փաստաթղթեր են կցվում. |
| 292 | Համայնքներին սեփականության իրավունքով պատկանող և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերով, շինություններով զբաղեցված հողամասերը կարո՞ղ են հանձնվել վարձակալության. |
| 293 | Հայաստանի Հանրապետությունում ո՞ր հողերն են մոնիթորինգի օբյեկտ. |
| 294 | Հատուկ պահպանվող տարածքների հողերի վրա դրանց գործառնական նշանակությանը և սահմանված իրավական ռեժիմին հակասող ի՞նչ գործունեություն է թույլատրվում իրականացնել. |
| 295 | Հողագիտական, երկրաբուսաբանական և այլ հետազոտումները ու հետախուզումները հողաշինարարական փաստաթղթերի կազմման ո՞ր փուլերից է. |
| 296 | Հողամասերի ներառումը բնակավայրերի սահմանների մեջ Ի՞նչ ազդեցություն է ունենում դրանց սեփականատերերի իրավունքների վրա. |
| 297 | Հողամասը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով ու՞մ է տրամադրվում. |
| 298 | Հողամասի մասնավորեցման համար ի՞նչ է պարտավոր ներկայացնել քաղաքացին կամ իրավաբանական անձը. |
| 299 | Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի օտարումը փոխանակության միջոցով սեփականատերերի միջև ի՞նչ նպատակով է կատարվում. |

| | |
|-----|---|
| 300 | Հողամասի սահմանները սեփականատիրոջ կամ օգտագործողի ցանկությամբ կարո՞ղ է սահմանազատվել սահմանանիշերով. |
| 301 | Հողամասն ի՞նչ նպատակով կարող է ծանրաբեռնվել սերվիտուտով. |
| 302 | Հողաշինարարական փաստաթղթերի կազմումը և հաստատումը հողաշինարարության կազմակերպման և իրականացման ո՞ր փուլերից է. |
| 303 | Հողերի հաշվառումը՝ ըստ նպատակային նշանակության, սեփականության ձևերի հողաշինարարական փաստաթղթերի կազմման ո՞ր փուլերից է. |
| 304 | Հողերի որակական գնահատումը /բռնիտում/ հողաշինարարական փաստաթղթերի կազմման ո՞ր փուլերից է. |
| 305 | Ո՞վ է կազմում համայնքի յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշիռը. |
| 306 | Ո՞վ է կատարում համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի փոխանակությունը. |
| 307 | Ո՞վ կամ ո՞ր մարմինը և ի՞նչ ժակետներում է հաստատում համայնքի հողերի օգտագործման սխեման. |
| 308 | Ո՞վ կամ ո՞ր մարմինն է ապահովում առանձին տարածքի կամ հողամասի հողաշինարարական նախագծի իրականացման նկատմամբ հսկողություն. |
| 309 | Ո՞վ կամ ո՞ր մարմինն է իրականացնում վերահսկողություն հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործման նկատմամբ. |
| 310 | Ո՞վ կամ ո՞ր մարմինն է իրականացնում վերահսկողություն հողային ֆոնդի նպատակային օգտագործման նկատմամբ. |
| 311 | Ո՞վ կամ ո՞ր մարմինն է իրականացնում վերահսկողություն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ հողային հարաբերությունների բնագավառում իրականացվող գործունեության նկատմամբ. |
| 312 | Ո՞վ կամ ո՞ր մարմինն է կազմում հողաշինարարական փաստաթղթերի մշակման տեխնիկական առաջադրանքը. |
| 313 | Ո՞ր ծրագրերին համապատասխան է իրականացվում հողերի մոնիթորինգը. |
| 314 | Ո՞ր հողերի դասին են դասակարգվում հասարակական կառուցապատման հողերն ըստ գործառնական նշանակության. |
| 315 | Ո՞ր հողերն են համարվում հատուկ նշանակության. |
| 316 | Ո՞ր մարմինն է իրականացնում վերահսկողություն մարզի սահմանանիշերի պահպանման նկատմամբ. |
| 317 | Ո՞ր մարմինն է իրականացնում վերահսկողություն նոր հողերի յուրացման նկատմամբ. |
| 318 | Ո՞ր մարմնի հետ են համաձայնեցվում ՀՀ տարածքի, ՀՀ մարզերի տարածքների և դրանց առանձին հատվածների համար մշակվող հողաշինարարական փաստաթղթերի մշակման տեխնիկական առաջադրանքները. |
| 319 | Ո՞ր վիճելի հողերը մասնավորեցման ենթակա չեն մինչև համապատասխան որոշման ուժի մեջ մտնելը. |
| 320 | Ո՞րը չի մտնում հողաշինարարական փաստաթղթերի կազմման հիմնական փուլերի մեջ. |
| 321 | Ո՞րը չի համարվում հողաշինարարության կազմակերպման և իրականացման հիմնական փուլերից. |
| 322 | Ո՞րն է ընդգրկվում հողերի օգտագործման սխեմայի մշակման առաջադրանքում. |
| 323 | Ո՞րն է հիմք հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով |

| | |
|-----|--|
| 324 | Ի՞նչ կարգով է իրականացվում ընդհանուր սեփականության ներքո գտնվող հողամասի տնօրինումը, տիրապետումը և օգտագործումը. |
| 325 | Ինչպիսի՞ հողեր են համարվում բնակավայրերի այն հողատարածքները, որոնք զբաղեցված են փողոցներով, հրապարաներով, զբոսայգիներով և հանրության կողմից օգտագործվող այլ տարածքներով. |
| 326 | Համայնքի ղեկավարի կողմից մշակված հողերի օգտագործման սխեմայի կազմման առաջադրանքի նախագիծը համայնքի ավագանու հավանությանն արժանանալուց հետո ի՞նչ ժամկետում է ներկայացվում համապատասխան մարզպետին՝ համաձայնեցման. |
| 327 | Հողաշինարարական նախագծի կազմումը և հաստատումը հողաշինարարական փաստաթղթերի կազմման ո՞ր փուլերից է. |
| 328 | Ո՞վ կամ ո՞ր մարմինն է իրականացնում համայնքների հողերի օգտագործման սխեմաների, բնակավայրերի գլխավոր հատակագծերի իրականացման նկատմամբ վերահսկողությունը. |
| 329 | Ովքե՞ր կամ ո՞ր մարմիններն են ապահովում ՀՀ հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայի և մարզերի հողային պաշարների կառավարման սխեմաների իրականացման նկատմամբ հսկողությունը. |
| 330 | Պետության կամ համայնքների սեփականությանը պատկանող և քաղաքացիների ու իրավաբանական անձանց մոտ օգտագործման (մինչև դրա ժամկետի լրանալը) իրավունքով գտնվող հողամասերը կարո՞ղ են օտարվել այլ անձի. |
| 331 | Ի՞նչ է մեկ կամ մի քանի սեփականատերերի հողամասերից սահմանափակ օգտվելու իրավունքը. |
| 332 | Ո՞րն է նշվում սխեմայի տեքստային մասում. |
| 333 | Ովքե՞ր կամ ո՞ր մարմիններն են իրականացնում համայնքների հողերի օգտագործման սխեմաների իրականացման նկատմամբ վերահսկողությունը. |
| 334 | Ի՞նչ է քաղաքացիական օրենսգրքով և հողային օրենսգրքով սահմանված առանձնահատկություններին համապատասխան պայմանագրեր և այլ գործարքներ կնքելու միջոցով հողամասի և դրա նկատմամբ իրավունքների անցումը մեկ անձից մեկ այլ անձի. |
| 335 | Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը. |
| 336 | Ի՞նչ է ապահովում հողաշինարարությունը հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման ոլորտում. |
| 337 | Ի՞նչ է ներառում հողային հարաբերությունների պետական կարգավորումը. |
| 338 | Ի՞նչ իրավասություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինները հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում. |
| 339 | Գյուղատնտեսական գործունեության համար և որպես տնամերձ կամ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար պետության և համայնքների սեփականության հողամասերը սեփականության իրավունքով անհատույց ու՞մ են տրամադրվում. |
| 340 | Նախագծի իրականացումը, հողամասերի սահմանների ամրացումը, նախագծով սահմանված միջոցառումների իրականացումը հողաշինարարության կազմակերպման և իրականացման ո՞ր փուլերից է. |
| 341 | Ո՞վ կամ ո՞ր մարմինն է իրականացնում վերահսկողություն հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ. |

| | |
|-----|--|
| 342 | Ինչպիսի՞ հողեր են համարվում բնակելի, հասարակական կառուցապատման, ընդհանուր օգտագործման հողերի այնպիսի համադրությամբ կազմավորված տարածքները, որտեղ դրանցից որևէ մեկը գերակշիռ նշանակություն չունի: |
| 343 | Ո՞ր հողերը կարող են ներառվել պահուստային հողերի կազմում: |
| 344 | Քանի՞ գործառնական նշանակությունների են դասակարգվում բնակավայրերի հողերը: |
| 345 | Ինչպիսի՞ գործառնական նշանակությունների են դասակարգվում բնակավայրերի հողերը: |
| 346 | Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում անհատական բնակելի տների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողերը: |
| 347 | Խառը կառուցապատման գործառնական նշանակության հողերը որ նպատակային նշանակության հողերի շարքում են դասակարգվում: |
| 348 | Այգեգործական հողերը որ գործառնական նշանակության հողերի շարքին են դասվում: |
| 349 | Երկաթուղային օբյեկտները որ գործառնական նշանակության հողերի շարքին են դասվում: |
| 350 | Հեռուստատեսության օբյեկտները որ գործառնական նշանակության հողերի շարքին են դասվում: |
| 351 | Արգելանոցների հողերը որ գործառնական նշանակության հողերի շարքին են դասվում: |
| 352 | Զբոսաշրջության բազաներով զբաղեցրած հողերը որ գործառնական նշանակության հողերի շարքին են դասվում: |
| 353 | Ճահիճներով զբաղեցրած հողերը որ նպատակային նշանակության հողերի շարքին են դասվում: |
| 354 | Ի՞նչ կատեգորիայի հողեր կարող են լինել բնակավայրի սահմաններում: |
| 355 | Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում հիդրոէլեկտրոկայանների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողերը: |
| 356 | Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում օդանավակայանների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողերը: |
| 357 | Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում մաքրման կայանների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողերը: |
| 358 | Ո՞ր գործառնական նշանակության մեջ են դասակարգվում համայնքային և մասնավոր գերեզմանատները: |
| 359 | Քանի՞ գործառնական նշանակությունների են դասակարգվում հատուկ պահպանվող հողերը: |
| 360 | Ինչպիսի՞ հողատեսքերի են բաժանվում անտառային հողերը: |
| 361 | Ի՞նչ կարգով են սահմանվում անտառային հողերի տրամադրումը, պայմաններն ու օգտագործման նկատմամբ սահմանափակումները և հողօգտագործման հատուկ ռեժիմը: |
| 362 | Ովքե՞ր կամ ո՞ր մարմիններն են իրականացնում հողերի ընթացիկ հաշվառումը: |
| 363 | ՀՀ հողային ֆոնդը քանի՞ նպատակային նշանակության (կատեգորիաների) է դասակարգվում: |
| 364 | Ի՞նչ է հողատեսքը: |
| 365 | Ի՞նչ հորատեսքերի են բաժանվում գյուղատնտեսական նպատակության հողերը: |

| | |
|-----|--|
| 366 | Ու՛մ թույլտվությամբ և ի՛նչ կարգով է իրականացվում գյուղատնտեսական քարձրարժեք հողատեսքերի փոխադրումն ավելի ցածրարժեք հողատեսքերի: |
| 367 | Բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կազմում ընդգրկված են արդյոք կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության հողամասերը: |
| 368 | Բնակչության սոցիալական սպասարկման համար տրամադրված հողամասերը որ գործառնական նշանակության հողերի շարքում են դասվում: |
| 369 | Ո՞ր հողամասերն են դասակարգվում ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողերի շարքում: |
| 370 | Ո՞ր հողերն են դասակարգվում բնակավայրերի այլ հողերի գործառնական նշանակության շարքում: |
| 371 | Ի՛նչ փաստաթղթերի հիման վրա են որոշվում բնակավայրերի սահմանագծերը: |
| 372 | Ի՛նչ փաստաթղթի հիման վրա են սահմանվում քաղաքամերձ գոտիների սահմանները և իրավական ռեժիմը: |
| 373 | Ո՞ր գործառնական նշանակության հողամասերն են դասակարգվում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի շարքում: |
| 374 | Ի՛նչ կարգով են որոշվում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի օգտագործման հատուկ պայմանները: |
| 375 | Ըներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողերը ինչպիսի գործառնական նշանակությունների են դասակարգվում: |
| 376 | Ատոմային էլեկտրոկայանի զբաղեցրած հողամասը որ գործառնական նշանակության հողերի շարքին է դասվում: |
| 377 | Ռադիոհաղորդումների օբյեկտների զբաղեցրած հողամասը որ գործառնական նշանակության հողերի շարքին է դասվում: |
| 378 | Խողովակաշարային տրանսպորտի օբյեկտների զբաղեցրած հողամասը որ գործառնական նշանակության հողերի շարքին է դասվում: |
| 379 | Կոյուղագծերով զբաղեցրած հողամասերը որ գործառնական նշանակության հողերի շարքին է դասվում: |
| 380 | Մշակութային օբյեկտներով զբաղեցրած հողամասերը որ գործառնական նշանակության հողերի շարքին է դասվում: |
| 381 | Ո՞ր մարմնի կողմից է սահմանվում հատուկ պահպանվող տարածքների հողերի առանձնացման, տրամադրման, օգտագործման և պահպանման կարգը: |
| 382 | Ինչպե՛ս է սահմանվում հատուկ պահպանվող տարածքների հողերի սահմանման կարգն ու օգտագործման նկատմամբ սահմանափակումները և իրավական ռեժիմը: |
| 383 | Համայնքային գերեզմանատների զբաղեցրած հողամասերը որ գործառնական նշանակության հողերի շարքին է դասվում: |
| 384 | Սահմանվո՞ւմ են արդյոք սանիտարական պահպանության գոտիներ հատուկ սանիտարական պաշտպանություն պահանջող ջրային հողերի համար: |
| 385 | Թփուտները հանդիսանում են արդյոք գյուղատնտեսական նշանակության հողատեսք: |
| 386 | Սպանդանոց կառուցելու նպատակով նախատեսված հողամասի նպատակային նշանակությունը որ մարմնի որոշմամբ կարող է փոփոխվել: |

| | |
|-----|---|
| 387 | Անտառները հանդիսանում են արդյոք անշարժ գույքը: |
| 388 | Ի՞նչ է անշարժ գույքի միավորը: |
| 389 | Ընդերքի մասերը հանդիսանում են արդյոք անշարժ գույքը: |
| 390 | Ի՞նչ է շինության հատակագիծը: |
| 391 | Որ մարմինն է հաստատում հողամասի և շինության օրենքով նախատեսված հատակագծերի ձևերը և հատակագծերին ներկայացվող պահանջները: |
| 392 | Ո՞վ կամ ո՞ր մարմինն է սահմանում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և հաստատման կարգերը: |
| 393 | Ո՞վ կամ ո՞ր մարմինն է հաստատում քաղաքաշինական և տարածքային զարգացման հանրապետական և մարզային պետական ծրագրերը: |
| 394 | Ի՞նչ նպատակով են մշակվում քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը: |
| 395 | Ո՞ր անշարժ գույքի օբյեկտների վրա են տարածվում գոտիավորմամբ սահմանված պահանջները: |
| 396 | Հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքները ենթակա են արդյոք պարտադիր պետական գրանցման: |
| 397 | Ի՞նչ փաստաթղթերով է կանոնակարգվում համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեությունը: |
| 398 | Ի՞նչ բնույթի փաստաթուղթ է համայնքի քաղաքաշինական գոտիավորման նախագիծը: |
| 399 | Հիմք է հանդիսանում արդյոք քաղաքաշինական գոտիավորման նախագիծը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի տրամադրման համար: |
| 400 | Հիմք է հանդիսանում արդյոք համայնքի քաղաքաշինական գոտիավորման նախագիծը ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման համար: |
| 401 | Հիմք է հանդիսանում արդյոք համայնքի քաղաքաշինական գոտիավորման նախագիծը շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման համար: |
| 402 | Ո՞ր համայնքների համար են գլխավոր հատակագծերն ու գոտիավորման նախագծերը մշակվում որպես ինքնուրույն փաստաթղթեր: |
| 403 | Քանի՞ խմբի են բաժանվում քաղաքաշինական փաստաթղթերը: |
| 404 | Որո՞նք են համարվում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր: |
| 405 | Ի՞նչ է տրվում կառուցապատողին ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար: |
| 406 | Ո՞վ է սահմանում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման, փոփոխման կարգերը: |
| 407 | Ո՞վ է տալիս ճարտարապետահատակագծային առաջադրանքը համայնքում: |
| 408 | Ո՞վ է տալիս շինարարության թույլտվությունը համայնքում: |
| 409 | Ի՞նչ է քանդման թույլտվությունը: |
| 410 | Ո՞վ է տալիս քանդման թույլտվությունը: |
| 411 | Ե՞րբ է սահմանված կարգով տրված շինարարության թույլտվությունը՝ համապատասխան նշումով, հանդիսանում նաև քանդման թույլտվություն: |
| 412 | Ո՞վ է փաստագրում ավարտված շինարարության շահագործման ընդունումը: |

| | |
|-----|--|
| 413 | Ինչպե՞ս կարող է օգտագործել քաղաքաշինական գործունեության օբյեկտի սեփականատերն իրեն պատկանող օբյեկտը: |
| 414 | Ո՞վ է ապահովում քաղաքաշինական օբյեկտի շահագործման որակական վիճակը նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: |
| 415 | Ի՞նչ կարգով են պարտավոր կառուցապատում իրականացնել կառուցապատողները: |
| 416 | Ովքեր և ի՞նչ կարգով են պարտավորել ապահովել քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը: |
| 417 | Կարո՞ղ են արդյոք քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը մասնակցած նախագծային կազմակերպությունները կամ անձինք կատարել կամ ներգրավվել իրենց մշակած նախագծերի փորձաքննությանը: |
| 418 | Որ մարմին է տրամադրում ճարտապետահատակգծային առաջադրանքը: |
| 419 | Ի՞նչ պարտավորություններ ունեն քաղաքաշինական փաստաթղթեր մշակողները: |
| 420 | Ինչպե՞ս են չափագրվում շինությունների ծավալում գտնվող տարածքները: |
| 421 | Ու՞մ կամ ո՞ր մարմնի կողմից ստեղծված համապատասխան հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա է համայնքի ղեկավարը գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը փոխադրում ավելի ցածրարժեք հողատեսքի: |
| 422 | Կարող է արդյոք գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը փոխադրվել ավելի ցածրարժեք հողատեսքի եթե կուլտերտեխնիկական ագրոտեխնիկական և այլ գյուղատնտեսական միջոցառումներով հնարավոր չէ վերականգնել հողատեսքերի որակական հատկանիշները: |
| 423 | Կարող է արդյոք գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը փոխադրվել ավելի ցածրարժեք հողատեսքի եթե գտնվում են մեծ թեքությունների վրա: |
| 424 | Ջրային տնտեսության պետական կոմիտեն քանի՞ օրվա ընթացքում պետք է ներկայացնի գրավոր տեղեկանք՝ ռոոզման ցանցի առկայության, դրա պիտանելիության և շահագործման մասին հանձնաժողովին գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք ջրովի հողատեսքը ավելի ցածրարժեք անջրդի հողատեսքի փոխադրելու վերաբերյալ: |
| 425 | Ու՞մ կամ ո՞ր մարմնի կողմից է սահմանվում ռոոզման ցանցի առկայության, դրա պիտանելիության և շահագործման մասին՝ հանձնաժողովին տրամադրվող տեղեկանքի ձևը: |
| 426 | Գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեքի փոխադրվելու դեպքում հողակադաստրային գնահատման խմբերն ինչպիսի՞ փոփոխության են ենթարկվում: |
| 427 | Համայնքի ղեկավարը գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման վերաբերյալ տեղեկանքը ո՞ր մարմնին է տրամադրում: |
| 428 | Համայնքի ղեկավարը գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման վերաբերյալ տեղեկանքը քանի՞ օրվա ընթացքում է տրամադրում Կադաստրի և կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանմանը: |
| 429 | Ու՞մ կամ ո՞ր մարմնի կողմից ստեղծված համապատասխան հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարը կարող է գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք ջրովի հողատեսքը փոխադրել ավելի ցածրարժեք անջրդի հողատեսքի: |

| | |
|-----|--|
| 430 | Ո՞ր մարմնի կողմից տրված համապատասխան գրավոր տեղեկանքի առկայության դեպքում կարող է հանձնաժողովը դրական եզրակացություն տալ գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք ջրովի հողատեսքը ավելի ցածրարժեք անջրդի հողատեսքի փոխադրելու վերաբերյալ: |
| 431 | Ու՞մ որոշմամբ է իրականացվում գյուղատնտեսական ցածրարժեք հողատեսքերի փոխադրումը ավելի բարձրարժեք հողատեսքի: |
| 432 | Ո՞րն է հանդիսանում էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտի: |
| 433 | Մայրուղային խողովակաշարերի կազմի մեջ մտնում են արդյոք ստորգետնյա գազապահեստարանները: |
| 434 | Ինչպե՞ս են սահմանվում մայրուղային խողովակաշարերի անվտանգության գոտիները: |
| 435 | Ինչպե՞ս են սահմանվում մայրուղային խողովակաշարերի անվտանգության գոտիները գյուղատնտեսական հողատարածքներում: |
| 436 | Ու՞մ կամ ո՞ր մարմնի կողմից տրված տեխնիկական պայմաններին համապատասխան մայրուղային խողովակաշարերի անվտանգության գոտիներում կարող է իրականացվել ցանկացած տնտեսական գործունեություն: |
| 437 | Ի՞նչ կարգով են փոխհատուցվում անվտանգության գոտիները, ինչպես նաև հողի նկատմամբ օգտակալություն /սերվիտուտ/ սահմանելու հետևանքով հողի սեփականատիրոջը կամ վարձակալին հասցված վնասները: |
| 438 | Ինչպե՞ս են ըստ նպատակային նշանակության դասակարգվում շենք, շինությունները. |
| 439 | Ո՞ր շինություններն են համարվում բնակելի: |
| 440 | Ո՞ր շինությունն է համարվում բնակարան: |
| 441 | Ո՞ր շինությունն է համարվում բազմաբնակարան բնակելի շենք: |
| 442 | Ո՞ր շինությունն է համարվում բնակելի տուն: |
| 443 | Ո՞ր շինություններն են համարվում հասարակական նշանակության: |
| 444 | Ինչպե՞ս են դասակարգվում արտադրական նշանակության շենքերը և շինություններն ըստ գործառնական նշանակության: |
| 445 | Ի՞նչ է անշարժ գույքի չափագրումը (հաշվառումը): |
| 446 | Ո՞ր անշարժ գույքերն են ենթակա չափագրման (հաշվառման): |
| 447 | Ի՞նչ է հողամասերի և դրանց վրա ամրակայված շինությունների քանակական հաշվառումը: |
| 448 | Ինչպե՞ս է իրականացվում հողամասերի և դրանց վրա ամրակայված շինությունների որակական հաշվառումը: |
| 449 | Ու՞մ կողմից է իրականացվում անշարժ գույքի չափագրումը: |
| 450 | Ինչպե՞ս են չափագրվում և գծագրվում հողամասերը: |
| 451 | Ինչպե՞ս են չափագրվում և գծագրվում հողամասերի վրա ամրակայված շինությունները: |
| 452 | Ինչպե՞ս են չափագրվում պարիսպները: |
| 453 | Ի՞նչ բարձրության վրա են կատարվում ներքին չափագրումները: |
| 454 | Ո՞ր չափերով է չափագրվում բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանները: |
| 455 | Ինչպե՞ս են համարակալվում հողամասի և շինությունների շրջադարձային (բեկման) կետերը: |
| 456 | Որ դեպքում հողամասի հատակագծում շինության կոորդինատները չեն լրացվում: |

| | |
|-----|--|
| 457 | Հողամասի հատակագծում ո՞ր գեոդեզիական կոորդինատային համակարգով են նշվում հողամասի և շինությունների շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատները: |
| 458 | Ինչպե՞ս են գծագրվում շինությունների հատակագծերը: |
| 459 | Ի՞նչ հերթականությամբ են գծագրվում շինությունների հատակագծերը: |
| 460 | Ի՞նչ մասշտաբով է գծագրվում շինությունների հատակագիծը: |
| 461 | Հատակագծի վրա ինչպե՞ս են համարակալվում հարկի ներքին տարածքները: |
| 462 | Ինչպե՞ս են ցույց տրվում հատակագծում ինքնական կառուցված շինությունները: |
| 463 | Որ՞ հողամասն է գծագրվում հողամասի հատակագծում: |
| 464 | Ինչպե՞ս են պատկերվում ինքնական շինությունը, որի մասը գտնվում է հատկացված հողամասում, իսկ մյուս մասը կառուցված է զավթած հողամասում: |
| 465 | Ի՞նչ իրավական ակտի համաձայն է հողամասի հատակագծում նշվում հողամասի նպատակային նշանակությունը: |
| 466 | Ի՞նչ իրավական ակտի համաձայն է հողամասի հատակագծում նշվում հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը: |
| 467 | Հողամասի հատակագծում ինչպե՞ս են ցույց տրվում հողամասի նկատմամբ սերվիտուտները: |
| 468 | Ի՞նչպես են նշվում հողամասի և շինությունների շրջադարձային (բեկման) կետերի համարները, կոորդինատները: |
| 469 | Ինչպիսի՞ նշագրում է կատարվում հատակագծում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինությունների հատակագիծ կազմելու դեպքում: |
| 470 | Յուրաքանչյուր հարկի մակերեսի որ տոկոսի չափով շեղումն է համարվում կառուցման ոչ էական շեղում: |
| 471 | Կառույցի բարձրության քանի մետր չափով համամասնական (ըստ հարկերի) շեղումն է համարվում ոչ էական շեղում: |
| 472 | Որ պահանջների ապահովման պայմանով են ավարտված շինարարական օբյեկտի սահմանված շեղումները համարվում ոչ էական: |
| 473 | Ո՞ր մարմինն է սահմանում և փոփոխում հողերի նպատակային և գործառնական նշանակությունը: |
| 474 | Ո՞վ է ապահովում պետական քաղաքականության իրականացումը քաղաքաշինության բնագավառում: |
| 475 | Ո՞ր դեպքերում կարող են անտառային հողերը տրամադրվել վարձակալությամբ՝ շենքեր և շինություններ կառուցելու նպատակով: |
| 476 | Ովքե՞ր կամ ո՞ր մարմինն է վարձակալության իրավունքով տրամադրում համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը: |
| 477 | Մասնավոր գերեզմանատների զբաղեցրած հողամասերը որ գործառնական նշանակության հողերի շարքին է դասվում: |
| 478 | Ի՞նչ իրավունք է ստանում համայնքի ավագանին՝ գլխավոր հատակագծի նախագծային փաստաթղթերը հաստատելուց հետո: |
| 479 | Հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխությունների մասին համայնքի ղեկավարը ի՞նչ ժամկետում է տեղեկացնում անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմնին: |

| | |
|-----|---|
| 480 | Համարվում են արդյոք ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների կառուցման, դրանց վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման, արդիականացման նախագծերը, ինչպես նաև ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների և դրանց մասերի նախագծերը: |
| 481 | Կարող է արդյոք գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը փոխադրվել ավելի ցածրարժեք հողատեսքի եթե օգտագործման ընթացքում խիստ էռոզացվել են: |
| 482 | Կարող է արդյոք գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը փոխադրվել ավելի ցածրարժեք հողատեսքի եթե ընթանում են ճահճացման, աղակալման, աղտոտման և այլ երևույթներ, որոնք հնարավոր չէ վերականգնել կանխարգելման միջոցառումներով |
| 483 | Քանի՞ մետր է սահմանվում ջրանցքների անվտանգության գոտիների լայնությունը, եթե հարակից լանջի թեքությունը 30-ից մինչև 45 աստիճան է: |
| 484 | Ի՞նչ նպատակով է իրականացվում հողամասերի և դրանց վրա ամրակայված շինությունների չափագրումը (հաշվառումը): |
| 485 | Հողամասի հատակագծում ինչպե՞ս են չափագրվում և գծագրվում այն շինությունները, որոնց մի մասը գտնվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված հողամասից դուրս: |
| 486 | Ով է տրամադրում եզրակացություն ավարտված շինարարական օբյեկտը ոչ էական շեղումներով կառուցված լինելու վերաբերյալ |
| 487 | Ինչ նպատակային նշանակությունների են դասակարգվում Հայաստանի Հանրապետության տարածքում շենքերը, շինությունները |
| 488 | Մեկից ավելի տարբեր նպատակային նշանակությամբ օգտագործվող շենքերը, շինությունները որ նպատակային նշանակությամբ են դասակարգվում. |
| 489 | Բազմաբնակարան բնակելի և բազմաֆունկցիոնալ շենքերում գտնվող հասարակական կամ արտադրական նշանակության շինությունները, որ նպատակային նշանակությամբ են դասակարգվում |
| 490 | Բնակելի կառուցապատման հողամասում գտնվող կամ կառուցման համար նախատեսված տնտեսական և օժանդակ շինությունները, ըստ նպատակային նշանակության, որ նպատակային նշանակությամբ են դասակարգվում |

| Հ/Հ | Տիպային խնդիրներ |
|-----|---|
| 1 | Որոշել նշված մասշտաբով քարտեզում արտացոլված գծի հորիզոնական պրոյեկցիայի երկարությունը տեղանքում, եթե տրված է այդ հատվածի երկարությունը քարտեզի վրա: (2) |
| 2 | Որոշել գծի երկարությունը տրված մասշտաբով քարտեզի վրա, եթե տրված է այդ գծի հորիզոնական պրոյեկցիայի երկարությունը տեղանքում: (2) |
| 3 | Որոշել քարտեզի մասշտաբը, եթե տրված է գծի երկարությունը քարտեզի վրա, ինչպես նաև այդ նույն գծի հորիզոնական պրոյեկցիայի երկարությունը բության մեջ: (2) |
| 4 | Որքա՞ն է կազմում տրված գծի ումբի մեծությունը, եթե տրված է տվյալ գծի ազիմուտը: (2) |
| 5 | Որքա՞ն է կազմում տրված գծի ազիմուտի մեծությունը, եթե տրված է տվյալ գծի ումբը: (2) |

| | |
|----|--|
| 6 | Որոշել գծի երկարությունը տրված մասշաբով քարտեզի վրա, եթե տրված է այդ գծի իրական երկարությունը և թեքման անկյունը: (4) |
| 7 | Որոշել գծի երկարությունը տրված մասշաբով քարտեզի վրա, եթե տրված է այդ գծի իրական երկարությունը և ծայրակետերի բացարձակ բարձրությունները: (4) |
| 8 | Որոշել նշված մասշտաբով քարտեզում արտացոլված գծի իրական երկարությունը տեղանքում, եթե հայտնի է, որ այդ գծի ծայրակետերը գտնվում են կից հորիզոնականների վրա և տրված է հատվածի երկարությունը քարտեզի վրա, ինչպես նաև քարտեզում արտացոլված հորիզոնականների հատվածքը (կտրվածքը, անկումը): (4) |
| 9 | Տրված երկու կետերի բացարձակ բարձրություններով և գծի հորիզոնական պրոյեկցիայի երկարությունով որոշել գծի թեքման անկյունը: (4) |
| 10 | Որոշել երկու կետերի հարաբերական բարձրությունը եթե հայտնի է տեղանքում չափված այդ կետերը միացնող գծի երկարությունը և թեքման անկյունը: (4) |
| 11 | Տրված A կետի բացարձակ բարձրության, տեղանքում չափված AB գծի երկարության և այդ գծի թեքման անկյան միջոցով որոշել B կետի բացարձակ բարձրությունը: (4) |
| 12 | Երկու կետերի հարթ ուղղանկյուն կոորդինատներով որոշել գծի հորիզոնական պրոյեկցիայի երկարության և դիրեկցիոն անկյունը (հակադարձ գեոդեզիական խնդիր): (4) |
| 13 | Տրված A կետի հարթ ուղղանկյուն կոորդինատների, AB գծի հորիզոնական պրոյեկցիայի երկարության և այդ գծի դիրեկցիոն անկյան միջոցով որոշել B կետի հարթ ուղղանկյուն կոորդինատները (ուղիղ գեոդեզիական խնդիր): (4) |
| 14 | Տրված եռանկյան գագաթների կոորդինատներով որոշել եռանկյան պարագիծը: (6) |
| 15 | Տրված եռանկյան գագաթների կոորդինատներով որոշել եռանկյան ներքին անկյունները: (6) |
| 16 | Որոշել տրված մասշտաբով քարտեզում արտացոլված երկու կից հորիզոնականները միացնող ամենամեծ թեքություն ունեցող AB հատվածի վրա նշված C կետի բացարձակ բարձրությունը, եթե հայտնի է այդ հորիզոնականների նիշերը և քարտեզի վրա չափված AC, CB հատվածների երկարությունները: (6) |

| Ը/Ը | Տիպային առաջադրանքներ |
|-----|--|
| 1 | Գեոդեզիական աշխատանքների ժամանակ չափման ճշտության վրա ի՞նչ հիմնական գործոններ են ազդում: |
| 2 | Ի՞նչ հանգամանքներով է պայմանավորված չափումների ժամանակ կոպիտ, սխտեմատիկ և պատահական սխալները: |
| 3 | Տրված քարտեզի համար կառուցել թվային մասշտաբին համապատասխանող գծային մասշտաբ և երկու եղանակով որոշել տրված հատվածի հորիզոնական պրոյեկցիայի երկարությունը: |
| 4 | Տրված քարտեզում որոշել C կետի բացարձակ բարձրությունը: |
| 5 | Տրված քարտեզում որոշել C կետի ուղղանկյուն կոորդինատները: |
| 6 | Ինչպե՞ս կորոշվի ուղղաձիգ տեղակայված սյան բարձրությունը, եթե ունեք հորիզոնական և ուղղաձիգ անկյունների, ինչպես նաև գծային չափումներ իրականացնելու հնարավորություն: |
| 7 | Ինչպե՞ս կկառուցեք քարտեզում արտացոլված գծի պրոֆիլը: |
| 8 | Ինչպե՞ս է իրականացվում շինության չափագրումը և հատակագծի կազմումը: |

| | |
|----|---|
| 9 | Ինչպե՞ս է իրականացվում հողամասի հանութագրումը և հատակագծի կազմումը: |
| 10 | Ի՞նչ քանակական և որակական տվյալներ են հավաքագրվում շենք-շինությունների չափագրման և հողամասերի հանութագրման աշխատանքների ժամանակ |